ՀՏԴ : 745/749(44)
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-45

ԴԻԶԱՅՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԵՆՏ ԷՏԻԵՆՈՒՄ*

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ուսումնասիրությունն ընդգրկում է Սենտ Էտիեն քաղաքի դիզայնի զարգացման հայեցակարգն ու դիզայնի բիենալի ներդրումը որպես քաղաքային զարգացման առաջնահերթություն:

Բանալի բառեր՝ *դիզայն, ճարտարապետություն, Ֆրանսիա, Սենտ Էտիեն, Երևան, դիզայն-հայեցակարգ, դիզայն-հարմոնիա:*

Ներածություն

Սենտ Էտիեն քաղաքը գտնվում է Ֆրանսիայի կենտրոնական հատվածում՝ Ռոն Ալպ ռեգիոնում: Համարվում է այս ռեգիոնի բնակչության թվով և մեծությամբ երկրորդ քաղաքը: Ժամանակին քաղաքը եղել է Ֆրանսիայի կենտրոնական հատվածի բանուկ խաչմերուկներից մեկը, որտեղ զարգացած է եղել թե՛ արդյունաբերությունը և թե՛ առևտուրը: Ժամանակի ընթացքում բազմաթիվ արտադրական ձեռնարկություններ դադարել են գործել, քաղաքը բախվել է ներքին արտագաղթին, և գործազրկության պատճառով բնակչության թվաքանակը 220 հազարից հասել է մինչև 140-150 հազարի: Թեև 19-րդ դարում քաղաքի բնակչությունը եղել է մոտ 30 հազար, սակայն հետզհետե այն աճել է: 16-րդ դարում քաղաքն անվանել են նաև ռազմական քաղաք, քանի որ այստեղ են արտադրվել մի շարք զինատեսակներ: Քաղաքի բնակչության թվաքանակի կրճատման վրա մեծ ազդեցություն է ունեցել երիտասարդների ոչ բավարար հետաքրքրվածությունը, քանի որ քաղաքի տարածքում գործող մետաղամշակությունը, ածխի արտահա-

---

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A006 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, 016 մասնագիտական խորհրդի անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, martinharutyunyan@hotmail.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

նումն ու թեթև արդյունաբերությունն այնքան էլ հետաքրքիր չէին տեղի երիտասարդությանը, որոնք ժամանակի ընթացքում տեղափոխվում էին հարակից քաղաքներ և ռեգիոններ[1]:

Ուսումնասիրության համար ընտրեցինք հենց այս քաղաքը, քանի որ քաղաքի զարգացման ծրագիրը փայլուն իրագործելի օրինակ կարող է ծառայել ոչ միայն Երևանի, այլև Հայաստանի մի շարք այլ քաղաքների համար, որոնք մեր ժամանակներում կորցրել են հետաքրքրությունը երիտասարդների համար, չկա անելիք կամ աշխատատեղ, օրինակ՝ Արմավիր, Աբովյան, Հրազդան և այլն:

Ուսանելի է ֆրանսիական քաղաքային կառավարման փորձը: Ֆրանսիական քաղաքները զարգանում են հստակ սահմանված ծրագրերով և հայեցակարգերով՝ Փարիզը համարվում է Ֆրանսիայի արվեստի, ֆինանսական և տուրիզմի կենտրոնը, Լիոնը՝ գաստրոնոմիայի և դեղերի արտադրության, Մարսելը՝ թեթև արդյունաբերության և SS-ի, Թուլուզը՝ օդանավերի արտադրության, Նանտը՝ կանաչ տարածքների պահպանման և էկոլոգիայի, Նիցցան՝ նորաձևության, հագուստի արտադրության, Մոնպելիեն՝ կրթական, Ստրասբուրգը՝ քաղաքական, Բորդոն՝ միջազգային ընկերությունների և ռազմական տեխնիկայի արտադրության, Լիլը՝ տեքստիլ արդյունաբերության: Քաղաքների այս շարքը կարելի է շարունակել, քանի որ չենք կարող գտնել ֆրանսիական որևէ քաղաք, որին պետական բարձր մակարդակով տրված չէ որևէ ուղղությամբ զարգանալու առաջնահերթություն[2,3]:

Սենտ Էտիենը՝ դիզայնի կենտրոն

Արդեն շուրջ 12-13 տարի է, ինչ Սենտ Էտիեն քաղաքին տրվել է

---

[1] Morel Journel Christelle, Gay Georges, *Chapter 3: Saint-Étienne: from the modest to the creative city or the ongoing search for a convincing urban narrative,* Collection: Political Science and Public Policy 2022, EE Edward Elgar, Cheltenham, 2022, pp. 31-47, doi.org/10.4337/9781800374454, ISBN: 9781800374447.

[2] **Dejean Joan**, *How Paris Became Paris: The Invention of the Modern City,* Bloomsbury USA, 2014, English, pages: 320, ISBN-10: 1608195910

[3] **Enright Theresa**, *The Making of Grand Paris: Metropolitan Urbanism in the Twenty-First Century (Urban and Industrial Environments),* The MIT Press, Massachusetts, 2016, English, pages: 328, ISBN-10: 0262034697

Ֆրանսիայի դիզայնի կենտրոնի կարգավիճակ, և պետության ամենաբարձր աջակցությամբ այստեղ զարգանում են դիզայնի գրեթե բոլոր ճյուղերը: Տարեցտարի ավելանում են դիզայնով զբաղվող ընկերությունները, ուսումնական հաստատությունները և միջոցառումները[4]:

Այժմ անդրադառնանք, թե ինչ քայլեր են իրականացվել դիզայնի զարգացման ուղղությամբ, ինչպես նաև ներկայացնենք այս քաղաքում տեղի ունեցած հանդիպումներն ու դիտարկումները:

Առաջին և կարևորագույն քայլը, որն արվել է քաղաքը որպես դիզայնի ուղղությամբ զարգացնելու նպատակ, դիզայնի բիենալի կազմակերպումն էր: Որոշվել է անցկացնել ամենամյա դիզայնի բիենալ, որին մասնակցել են դիզայնի գրեթե բոլոր ճյուղերի մասնագետները, ներկայացրել են իրենց աշխատանքները, ցուցադրել նորարարություններն ու անելիքները, կազմակերպել կլոր սեղաններ, երկխոսություններ և այլն: Դիզայնի բիենալը դարձել է պարտադիր քաղաքի համար, և վերջին տասնամյակում այն տեղի է ունենում յուրաքանչյուր տարի, ավելին, արդեն մի քանի տարի է, ինչ բիենալին տրվել է միջազգային կարգավիճակ, և այժմ այն կոչվում է Սենտ Էտիենի դիզայնի միջազգային բիենալ, որտեղ արդեն ոչ միայն Ֆրանսիայից, այլև ամբողջ աշխարհից մասնակցում են տարբեր ոլորտների դիզայներները՝ ոչ միայն ցուցադրվելու, այլ նաև շփվելու, համագործակցելու և սովորելու համար[5]: Ուշագրավ է նաև այն փաստը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույնպես քաղաքին շնորհել է դիզայնի կենտրոն տիտղոսը, և քաղաքը զարգանում է միջազգային այս կազմակերպության հովանու ներքո:

Քաղաքում գործում է գեղարվեստի պետական բարձրագույն դպրոցը, այստեղ կազմակերպվում է բարձրագույն ուսուցում կիրառական արվեստի և դիզայնի գրեթե բոլոր բնագավառներում (նկ. 1):

Այս կառույցը դիզայնի ուսումնական հաստատության նոր շենքն է, իսկ նախկին շենքը թողնվել է նույնությամբ և քաղաքային իշխանությունների հովանու ներքո դարձել է ճարտարապետական ժառանգության նմուշ և ծառայում է միայն արվեստին վերաբերող ցուցադ-

---

[4] **Saint-Étienne-Design**, Unesco.org, https://en.unesco.org/creative-cities/saintetienne, 28.01.2023:

[5] Saint-Etienne International Design Biennale, https://biennale-design.com/saint-etienne/2022/, 28.01.2023.

ություններ կազմակերպելուն: Շենքի թե՛ արտաքին և թե՛ ներքին ճարտարապետադիզայներական հորինվածքը չի ձևափոխվել (նկ. 2):

Նկ. 1. Սենտ Էտիենի գեղարվեստի պետական բարձրագույն դպրոցի և դիզայնի կենտրոնի շենքերը

Նկ. 2. Սենտ Էտիենի գեղարվեստի պետական բարձրագույն դպրոցի նախկին շենքը

Ուսումնական այս հաստատությունում կատարված շրջայցի և ֆակուլտետների կառուցվածքի ու լաբորատորիաների պայմաններին ծանոթանալով՝ փաստեցինք, որ հայաստանյան արվեստի բուհերում գործող ֆակուլտետների համեմատ այստեղ առկա են մի շարք նեղ մասնագիտական ֆակուլտետներ կամ մասնագիտացումներ, որոնց շրջանավարտները զգալի մասնակցություն են ունեցել քաղաքային միջոցառումների անցկացմանն ու քաղաքի զարգացմանը: Ուսանողների դիպլոմային կամ կուրսային աշխատանքներն անմիջապես վերաբերում են քաղաքի մշակութային կյանքի ու դիզայն-ճարտարապետական նախագծերի ներդրմանն ու զարգացմանը: Նրանք անմիջական մասնակցություն են ունենում քաղաքում դիզայնի զարգացման փուլերին, որն էլ որակյալ և մասնագիտական առումով բեղմնավոր ուսումնական պրակտիկա է: Ուսուցումը եռաստիճան է՝ բակալավրիատ, մագիստրատուրա և հետազոտական: Առկա են հետևյալ ֆակուլտետները՝ արվեստ, կենցաղային արվեստ, կենցաղային դիզայն, դիզայն, դիզայն-հետազոտություն, թվային մտածողություն, գրաֆիկա և պատկեր, հասարակական օբյեկտներ[6]:

Արդեն մի քանի տարի է, ինչ քաղաքում գործում է նաև Cité du design պետական կառույցը, որը համակարգում է ոչ միայն կրթական, այլև քաղաքի դիզայնին վերաբերող զարգացման գրեթե բոլոր ծրագրերը: Ուսանողները և դիզայնի միջոցառումների հետ կապ ունեցող մարդիկ անմիջապես աշխատում են այս կառույցի հետ: Կառույցում գտնվում են մի շարք լաբորատորիաներ, գրադարաններ և սրահներ: Թե՛ կառույցը և թե՛ ուսումնական հաստատությունն ունեն իրենց զարգացման ծրագիրը, այստեղ հաշվի են առնված դիզայնին և գեղագիտությանը վերաբերող գրեթե բոլոր դետալները, որպես վառ օրինակ կարող ենք ներկայացնել դիզայնի քաղաքում գործող գրադարանի մուտքը, որը ճարտարապետների, դիզայներների, բնապահպանների և գեղագետների միահամուռ աշխատանքի արդյունք է (նկ. 3):

Քաղաքը, պահպանելով մշակութային արժեք ներկայացնող բոլոր կառույցները, որդեգրել է այն գերժամանակակից ճարտարապետական միջավայր դարձնելու գաղափարը, և տարեցտարի

[6] Cité du design/Esadse, www.esadse.fr, www.citedudesign.com/, 28.01.2023.

Նկ. 3. ESADS-ի գրադարանի մուտքը

քաղաքի պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցների միջավայրում ավելանում են կոնտրաստային և դիզայներական ժամանակակից լուծումներով տարատեսակ նորակառույցներ: Հատկանշական է, որ նորակառույցները կառուցվել են պետական հաստատությունների համար, և դրանց դիզայնի մշակմանն ու հաստատմանը մասնակցել են քաղաքային իշխանությունները[7] (նկ. 4, 5, 6, 7, 8, 9):



Նկ. 4, 5,6. Սենտ Էտիեն Մետրոպոլի (Saint-Étienne Métropole) շենքային համալիրը

[7] Saint-Etienne, Petit fute, 2006, French, pages: 336, ISBN-10: 2746915537.



Նկ. 7,8, 9. Նորակառույց հյուրանոց և բիզնես կենտրոն Սենտ Էտիենի կենտրոնում

Քաղաքում մեծ ուշադրություն է դարձվում ճարտարապետական դիզայնի զարգացմանը: Քաղաքում կառուցվող կամ վերակառուցվող բոլոր շենք-շինությունները գտնվում են քաղաքային իշխանությունների և Դիզայնի կենտրոնի ուշադրության կենտրոնում, և դրանց աշխատանքները համակարգվում են վերջիններիս մասնագետների կողմից: Ինչպես ցանկացած նորակառույց խիստ և հստակ կանոններով հըսկվում է ճարտարապետների, շինարարների և այլ նեղ մասնագետների կողմից, այստեղ դիզայները համարվում է այս մասնագետներից մեկը, և ցանկացած նախագիծ պետք է ներկայացվի նաև դիզայներների քննարկմանը: Հաշվի են առնվում ոչ միայն մասնագիտական եզրակացությունները, այլև քաղաքի ճարտարապետադիզայներական միջավայրը, բնակելի շենքերի և նորակառույցների կոմպոզիցիոն հարաբերակցությունը, փողոցների կառուցվածքը, բնապահպանական խնդիրները, բնակիչների հանգստի տարածքների համաչափ զարգացումը, տրանսպորտային հաղորդակցությունների և քաղաքային այլ անհրաժեշտ միավորների համապարփակ զարգացումն ու բնականոն աշխատանքը[8]:

Վերջին տասնամյակում քաղաքում կառուցվել են 50-ից ավելի պետական, հասարակական և մասնավոր շինություններ, նույնիսկ

[8] **Lynch Kevin**, *The Image of the City,* The MIT Press, Massachusetts, 1960, English, pages: 208, ISBN-10: 0262620014.

դրանցից շատերը՝ պատմամշակութային արժեք ներկայացնող շինությունների միջավայրում, սակայն վերջիններից ոչ մի նմուշ չի խեղաթյուրվել, չի քանդվել կամ վնասվել:

Սենտ Էտիենի քաղաքային պլանավորման դիզայն տարրերը

Քաղաքն աչքի է ընկնում ոչ միայն ճարտարապետական և գունային հետաքրքիր լուծումներով ճարտարապետական կառույցներով, այլև մի շարք դիզայն նախագծերով, որոնց կարող ենք հանդիպել քաղաքի մի շարք հատվածներում: Դրանք բոլորը նախագծված են դիզայներների ու քաղաքային բուհերում սովորող ուսանողների կողմից: Դրանք նախագծվել, մշակվել և իրականացվել են քաղաքային իշխանությունների անմիջական հսկողությամբ:

• **Աթոռներ**. տեղային դիտարկումներ իրականացնելիս նկատեցինք, որ քաղաքում տեղադրված փողոցային հարակից տարածքներում, այգիներում կամ պարզապես սպասելու համար նախատեսված աթոռ-նստարանները թե՛ գույնով և թե՛ ոճով նման չեն, սակայն դրանք իրենց դիզայն լուծումներով համահունչ են քաղաքային միջավայրին և լիովին ձուլվում են քաղաքի ժամանակակից ճարտարապետադիզայներական զարգացում բռնած ուղուն: Դրանց բազմազանությունը հետաքրքիր և էսթետիկ հաճելի ու ժամանակակից միջավայրում գտնվելու և այդ միջավայրի մասնիկը դառնալու զգացողություն են թողնում պատահական անցորդի վրա: Պարզ տեսանելի և հասկանալի է, որ այս տեսակի աթոռների նախագծման ժամանակ հաշվի են առնվել ոչ միայն քաղաքի ճարտարապետական կառույցների կոմպոզիցիոն լուծումներին համահունչ լինելու գաղափարը, այլև գույնի ազդեցությունը, ծավալների և ֆորմայի խաղը և, ընդհանրապես, միջավայրի դիզայն էֆեկտը (նկ. 10, 11, 12, 13, 14):

Նկ. 10, 11, 12, 13, 14. Աթոռ-նստարաններ Սենտ-Էտիենի կենտրոնում

• **Սեղաններ և սեղան-հենակներ**. բացի բազմատեսակ աթոռներից ու նստարաններից՝ քաղաքում տեղադրված են նաև անցորդների կամ կանգառներում սպասող քաղաքացիների համար նախատեսված տարատեսակ հենակներ և սեղանիկներ: Դրանք տեղադրված են հիմնականում մարդաշատ վայրերում՝ կայարանների մուտքեր, ուսումնական հաստատությունների բակեր ու քաղաքային տրանսպորտի կանգառների տարածքներ (նկ. 15, 16):

Նկ. 15, 16, 17. Սեղան-հենակներ

• **Կանգառներ.** Սենտ Էտիենում քաղաքային տրանսպորտի համար նախատեսված կանգառները նույնպես բազմաոճ են և հանդիպում են տարբեր դիզայներական լուծումներով: Դրանց գունային

երանգները հիմնականում համապատասխանում են քաղաքը սպասարկող տրանսպորտային ընկերությանը, իսկ յուրաքանչյուր կանգառ տեղադրելիս հաշվի են առնված նաև հարակից շենք-շինությունների ճարտարապետադիզայներական ու գունային լուծումները, այսինքն՝ դրանք թե՛ գունային և թե՛ նախագծային կոմպոզիցիաներով գտնվում են միջավայրային հարմոնիայի մեջ (նկ. 18):

Նկ. 18. Միևնույն դիզայներական ոճով կանգառի նստարանը, կանգառի կտուրը և քաղաքային տրանսպորտը սպասարկող ընկերության գրասենյակը (հետնամասում)

Քաղաքում տեղադրված բազմաթիվ այլ տարրեր՝ աղբամաններ, աղբամանների համար նախատեսված երկաթյա պատյաններ, կանգառների կտուրներ, գովազդային վահանակներ, ճաղավանդակներ, սանդուղքներ, նախատեսված և նախագծված են հենց այս քաղաքի համար՝ պահպանելով ճարտարապետադիզայներական միջավայրը:

Եզրակացություն

Սենտ Էտիեն քաղաքի դիզայնի զարգացման հայեցակարգն ու արդեն իրականացված գործողությունները կարելի է/անհրաժեշտ է կիրառել Հայաստանում: Ունենք առաջարկ ծրագիրը սկսել/ներդնել փոքր, սակայն արվեստի կրթօջախ ունեցող քաղաքներում, օրինակ՝ Դիլիջան, Իջևան, Աբովյան, Գյումրի:

Անհրաժեշտ է ունենալ պետության աջակցությունը առաջին հայացքից ոչ այդքան կարևոր, սակայն քաղաքի զարգացմանն ու բնակիչների մշակութային կյանքն ակտիվացնելու, տեսադաշտն ավելի էսթետիկ դարձնելու ծրագիր:

Քաղաքում կառուցվող կամ վերակառուցվող ցանկացած շենք, շինություն, փողոցային դետալների տեղադրում, կանգառների մշա-

կում և քաղաքային միջավայրի վրա ազդող ցանկացած գործողություն պարտադիր պետք է հաստատվեն կամ նվազագույնը անցնեն քննարկման դիզայներների կողմից:

Կարծում ենք, որ միջազգային այսպիսի փորձի ներդրումը հայաստանյան որևէ քաղաքում դրականորեն կազդի տվյալ քաղաքի տնտեսության ու մշակութային կյանքի զարգացման վրա, կնպաստի երիտասարդներին քաղաքային կառավարման կյանք ներգրավմանը և մասնագետներին աշխատանքով ապահովմանը, իսկ նմանօրինակ մեծ թեմատիկ բիենալների կազմակերպումն էլ իր հերթին կբերի այցելուների մեծ հոսք և տուրիզմի զարգացում:

РАЗВИТИЕ ДИЗАЙНА В СЕНТ-ЭТЬЕНЕ

МАРТИН АРУТЮНЯН

Исследование охватывает концепцию развития дизайна города Сент-Этьен и введение биеннале дизайна в качестве приоритета городского развития.

Ключевые слова: дизайн, архитектура, Франция, Сент-Этьен, Ереван, дизайн-концепция, дизайн-гармония.

DESIGN DEVELOPMENT IN SAINT-ÉTIENNE

MARTIN HARUTYUNYAN

The study covers the design development concept of the city of Saint-Étienne and the introduction of a design biennale as a priority for urban development.

Key words: design, architecture, France, Saint-Étienne, Yerevan, design-concept, design-harmony.